Հաստատված
«ՀՖԿՊԻ» հիմնադրամի
գիտական խորհրդի
2025թ. մայիսի 30-ի N129-Լ որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԵՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով սահմանվում են «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ Ինստիտուտ) առկա և հեռակա ուսուցման համակարգերով մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման պայմանները:

2. Սույն կարգի իրավական հիմքերն են՝ Հայաստանի Հանրապետության օրենքները, կառավարության որոշումները, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2007 թվականի դեկտեմբերի 6-ի N 1193Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հարապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգը», Ինստիտուտի կանոնադրությունը և իրավական այլ ակտեր:

3. Մագիստրոսական կրթական ծրագիրը կիրականացվի այն դեպքում, եթե նվազագույնը կա 3 ընդունված մագիստրանտ:

4. Ինստիտուտի մագիստրատուրայում ուսանողին թույլատրվում է առկա ուսուցմամբ սովորել միայն մեկ կրթական ծրագրով:

5. Ինստիտուտի մագիստրատուրայի ընդունելության յուրաքանչյուր տարվա տեղերի քանակը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

6. Առկա և հեռակա ուսուցման համակարգերով, մրցույթային կարգով Ինստիտուտի մագիստրատուրա կարող են ընդունվել Հայաստանի Հանրապետության պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների առնվազն բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող շրջանավարտները: Մագիստրոսի կամ գիտական աստիճան ունեցող քաղաքացիները մագիստրոսական կրթություն կարող են ստանալ միայն վճարովի

հիմունքներով: Օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք մագիստրատուրա կարող են ընդունվել միջպետական և միջգերատեսչական պայմանագրերի կամ համաձայնագրերի հիման վրա, լրացուցիչ տեղերի հաշվին, ինչպես նաև վճարովի հիմունքներով սեփական նախաձեռնությամբ:

7. Ինստիտուտի մագիստրատուրայում ընդունելությունը առկա ուսուցման համակարգով կատարվում է երկու փուլերով, իսկ հեռակա ուսուցման համակարգով՝ մեկ փուլով:

8. Առաջին փուլով մագիստրատուրայի ընդունելությունն ըստ մասնագիտությունների անցկացվում է ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված պետության կողմից ուսանողական նպաստաների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով ուսուցման տեղերի:

9. Առաջին փուլով կատարվում է պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), առկա ուսուցմամբ, մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելությունը, որը անցկացվում է ընթացիկ տարվա հունիսի 5-ից մինչև հունիսի 20-ը: Առաջին փուլին կարող են մասնակցել միայն բակալավրիատի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան ունեցող Ինստիտուտի տվյալ տարվա շրջանավարտները, որոնցից բացի՝ թափուր տեղերի առկայության դեպքում, առաջին փուլով առկա ուսուցման համակարգում մագիստրատուրայի ընդունելությանը կարող են մասնակցել նաև Ինստիտուտի տվյալ մասնագիտության բակալավրի կրթական աստիճան ունեցող նախորդ 3 տարիների շրջանավարտները:

10. Երկրորդ փուլով մագիստրատուրայի ընդունելությունն անցկացվում է մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 1-ը, ըստ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հաստատված ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի), առանց պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքի ուսուցման տեղերի

11. Մագիստրատուրայի ընդունելության մրցույթն անցկացվում է առանց ընդունելության քննության, մրցութային հիմունքներով՝ դիպլոմի հավելվածում գրանցված առարկաների միջին որակական գնահատականի (ՄՈԳ) հիման վրա:

12. Մագիստրատուրայի ընդունելության մրցույթն անցկացվում է հետևյալ չափանիշների առաջնահերթությամբ.

1) դիպլոմի հավելվածում գրանցված առարկաների միջին միավորը և ընդունող հանձնաժողովի հարցազրույցով կայացած որոշումը, իսկ միավորների հավասարության դեպքում՝

2) գերազանց դիպլոմի առկայությունը,

3) ավարտական աշխատանքի և ամփոփիչ ատեստավորման գնահատականների միջին որակական գնահատականը (ՄՈԳ),

4) մարզական կարգը և կոչումը, միջազգային մրցումների արդյունքները,

5) տպագրված գիտական աշխատանքների առկայությունը:

13. Անվճար (պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ) տեղերի համար հայտարարված մրցույթը չհաղթահարելու դեպքում առաջին փուլի դիմորդներ՝ ըստ իրենց համաձայնությամբ ընդունվում են նույն կրթական ծրագրի վճարովի համակարգ:

14. Երկրորդ փուլով ընդունելությունը կատարվում է միայն վճարովի ուսուցման համակարգում: Այս փուլի ընդունելության մրցույթին կարող են մասնակցել Ինստիտուտի և այլ պետական, ըստ մասնագիտությունների հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի, մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող շրջանավարտները:

15. Այլ պետական, ըստ մասնագիտությունների հավատարմագրված /ինստիտոցիոնալ հավատարմագրում անցած ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների (առկա և հեռակա ուսուցման համակարգերի) բակալավրի, մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող շրջանավարտները վճարովի հիմունքներով առկա և հեռակա ուսուցման համակարգերով մագիստրատուրա ընդունվելու համար մասնակցում են հարցազրույցի՝ որը պարունակում է հարցեր մասնագիտական առարկաներից, որով ստուգվում են դիմորդի ընդհանուր մասնագիտական գիտելիքները:

16. Հեռակա ուսուցման համակարգով մագիստրատուրայում կրթությունը կազմակերպվում է միայն վճարովի հիմունքներով՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Հեռակա ուսուցման համակարգով ընդունելության մրցույթին կարող են մասնակցել ՀՖԿՍՊԻ և այլ պետական, ըստ մասնագիտությունների հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի, մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող շրջանավարտները:

17. Մագիստրատուրայի վճարովի համակարգ ընդունված դիմորդները պարտավոր են սահմանված կարգով, չափով և ժամկետում վճարել ուսման վարձավճարը, որից հետո կատարվում է նրանց հրամանագրումը:

18. Ինստիտուտի մագիստրատուրա ընդունվելու մասին դիմորդի հրամանը ստանալուց հետո 10 (տաս) օրյա ժամկետում կազմվում է անձնական գործ:

2. ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

19. Ինստիտուտի կողմից զանգվածային լրատվության միջոցներով տրվում է հայտարարություն՝ ընդունելության մասնագիտությունների և տեղերի վերաբերյալ:

20. Մագիստրատուրայի ընդունելության անցկացման համար, ինստիտուտի ռեկտորի հրամանով և նախագահությամբ, ստեղծվում է ընդունող հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են ինստիտուտի ուսումնագիտական գծով պրոռեկտորը, ֆակուլտետի դեկանները, համապատասխան ամբիոնի վարիչները և Մագիստրատուրայի և ասպիրանտուրայի բաժնի ղեկավարը:

21. Ընդունող հանձնաժողովը ուսումնասիրում և քննարկում է վերջինիս կողմից ներկայացրած մրցույթի հավակնորդների ցուցակները և ըստ մասնագիտությունների իրականացնում է մրցույթը:

22. Ընդունելության վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը ստորագրում են ընդունող հանձնաժողովի բոլոր անդամները:

23. Ինստիտուտի ռեկտորը ընդունող հանձնաժողովի կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա հրամանագրում է մրցույթային հիմունքներով մագիստրատուրա ընդունված դիմորդներին:

4. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

24. Ինստիտուտի մագիստրատուրա ընդունվելու համար դիմորդները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

1) մագիստրատուրայի ընդունելության լրացված դիմում-հայտ, որտեղ կարող է նշվել միայն մագիստրոսական մեկ կրթական ծրագիր,

2) բակալավրի, դիպլոմավորված մասնագետի, մագիստրոսի դիպլոմի և դրա հավելվածի (միջուկի) բնօրինակները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ «Ակադեմիական փոխճանաչման և շարժունեության ազգային տեղեկատվական կենտրոնից» տեղեկանք՝ դիպլոմի համարժեքության մասին),

3) ինքնակենսագրություն և 2 լուսանկար (3 x 4 չափի),

4) հրատարակված կամ հրատարակման ընդունված գիտական աշխատությունների ցուցակ (դրանց առկայության դեպքում),

5) Անձնագրի կամ նույնականացման քարտի բնօրինակը,

6) զինվորական գրքույկի (առկայության դեպքում) բնօրինակը (1-4-րդ և 18-19-րդ էջերը),

7) ընդունելության ծառայությունների համար գանձվող վճարման անդորրագիրը:

Դիմորդի կողմից ներկայացված դիպլոմի իսկությունը պարզելու նպատակով հանձնաժողովը իրավասու է ըստ անհրաժեշտության դեպքում պահանջել տեղեկանք դիպլոմի իսկության մասին:

5. ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

25. Մագիստրանտները Ինստիտուտի աշխատողների հետ հավասարապես օգտվում են գիտական սարքավորումներց, լաբոտատորիաներից համակարգչային տեխնիկայից, գրադարաններից, մարզաբազաներից և այլ հնարավորություններից:

26. Մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնառությունն ավարտած և ամփոփիչ ատեստավորումն անցած անձանց տրվում է Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի ավարտական փաստաթուղթ՝ մագիստրոսի դիպլոմ համապատասխան ներդիրով:

27. Մագիստրատուրայում ուսուցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական կրթական չափորոշիչներին և հիմնական կրթական ծրագրերին համապատասխան:

28. Մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու համար առկա ուսուցման համակարգում ուսուցման տևողությունը սահմանվում է մեկ տարի, իսկ հեռակա ուսուցման համակարգում՝ մեկ տարի և վեց ամիս:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

29. Սույն կարգի մեջ փոփոխություններն ու լրացումները կատարվում են ՀՖԿՍՊԻ գիտական խորհրդի կողմից Ինստիտուտի կանոնադրությամբ ու ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

30. Սույն կարգը հրապարակվում է Ինստիտուտի պաշտոնական կայքում: